ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №3 / Протокол №3

Գնահատող հանձնաժողովի նիստի / Заседания оценочной комиссии

1. Տվյալներ պատվիրատուի, ընթացակարգի (ծածկագրի), ապրանքների ձեռք բերման, նիստի անցկացման մասին

Պատվիրատու / Заказчик	<<ՀԱԷԿ>> ՓԲԸ / ЗАО «ААЭК»
Գտնվելու վայրը / Адрес	ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր / РА, Армавирский марз, г. Мецамор
Ընթացակարգի ծածկագիրը / Код процедуры	ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-175/22 / HAEK-EAAPDzB-175/22
Ձեռք բերվող ապրանքի անվանումը / Наименование приобретаемого товара	ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի և փականների մատակարարում՝ ներառյալ հին ապատեղակայում, նորի տեղակայում և կարգաբերում / Поставка трубопроводов и арматур для I и II каналов системы охлаждения ответственных потребителей (СООП) аппаратного отделения энергоблока No2 Армянской АЭС, включая демонтаж старого, монтаж и наладка нового
Նիստի անցկացման վայրը / Место проведения заседания	<<ՀԱԷԿ>> ՓԲԸ, վարչական շենք / ЗАО «ААЭК», административный корпус
Նիստի անցկացման օրը և ժամը / Дата и время поведения заседания	11.01.2023թ. ժամը 15:00
Նիստի անցկացման նպատակը / Цель проведения заседания	Կասեցված նիստի վերսկսում / возобновление приостановленного заседания
Այլ տեղեկություններ	Հաշվի առնելով տոնական օրերը (քանի որ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը հանդիսանում է ՌԴ-ռեզիդենտ) գնահատող հանձնաժողովը կայացրել է որոշում կասեցված նիստը վերսկսել տոնական օրերից հետո

2. Տվյալներ նիստին ներկա հանձնաժողովի կազմի մասին
Данные о членах комиссии, участвующих в заседании

Հանձնաժողովի նախագահ Председатель комиссии	Ա. Արսենյան / А. Арсенян	ՌԱ պետ / НРЦ
Հանձնաժողովի անդամներ Члены комиссии	Հ. Բաղդասարյան / А. Багдасарян	ՇԵԵՌԲ գլխավոր մասնագետ / Вед. спец. ОРиПЭ
	Ս. Սաֆարյան / С. Сафарян	ՌԱ պետի տեղակալ / ЗНРЦ
	Գ. Մարկոսյան / Г. Маркосян	ԳԲ 2-րդ կարգի մասնագետ / спец. 2-й кат. ОЗ
	Ա. Գրիգորյան / А. Григорян	ԳԲ առաջատար մասնագետ / вед. Спец. ОЗ
Համակարգող-քարտուղար / координатор - секретарь	Հ. Ռամազյան / Р. Рамазян	ԳԸԲ գլխավոր մասնագետ / главный специалист ОЗП

3. Տվյալներ գնման անհրաժեշտության, գնման ձևի ընտրության հիմնավորման վերաբերյալ

Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մաս և 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետ «ՀԱԷԿ» ՓԲԸ 2022թ. Գնումների պլանի 8.6 կետ ч. 3 статьи 18 и п. 2 ч. 6 статьи 15 Закона РА «О закупках» пп. 8.6 плана закупки ЗАО «ААЭК» на 2022г.

4. Տվյալներ մասնակիցների մասին
Данные об участниках

Հայտ ներկայացրած մասնակիցների քանակը Число участников, представивших заявку	4
Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, հասցեն, հեռախոսի համարը Название, адрес, номер телефона организаций, представивших заявку	**ООО «НТЛ-ПРИБОР»** ՌԴ, 107023, ք. Մոսկվա, փ. Սեմյոնովսկայա Մալայա, շ. 11/2 / РФ, 107023, г. Москва, ул. Семёновская Малая, дом 11/2 стр. 16, հեռ./тел.+7-495-964-30-00; +7-499-748-14-56, mail@ntl-pribor.ru
	«Ռուսատոմ Սերվիս» ԲԸ / АО «Русатом Сервис» 117335 ՌԴ, ք. Մոսկվա, պող. Նախիմովսկիյ, շ. 58, 9-րդ հարկ, XXVI տարածք, հեռ. +7 (495) 995 76 80, info@rusatomservice.ru / 117335, Россия, г. Москва, Нахимовский проспект, дом 58, 9 этаж, помещение XXVI, тел: +7 (495) 995 76 80, info@rusatomservice.ru
	«Իստոկ 34» ՍՊԸ / ООО «Исток 34» ՌԴ, 109029, ք. Մոսկվա, Նիժեգորոդսկայա փ., շ. 32, 3-րդ կտ., 138 տարածք, հեռ. +7 (919) 046 93 86 РФ, 109029, г. Москва, ул. Нижегородская, д. 32 стр. 3 этаж. 1 пом. 138, тел. +7 (919) 046-93-86
	«Երվադա» ՍՊԸ / ООО "Ервада", ՀՀ, ք. Երևան, Արին բերդի 3-րդ նրբանցք 10/3, հեռ. +374 33 71 77 77 РА, г. Ереван, ул. Арин Берд, 3-й пер. 10/3, тел. +374 33 71 77 77

5. Տվյալներ ՀՀ ՖՆ կատարված հարցման վերաբերյալ
Данные по запросу отправленного в МФ РА

«Ռուսատոմ Սերվիս» ԲԸ-ից ստացվել է գրություն, որով մասնակիցը ներկայացրել է հարցեր՝ պրզաբանման նպատակով: Քանի որ բարձրացված հարցերը ունեին գործող «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերի պարզաբանման կարիք և կարող էին ազդել գնման ընթացակարգի հետագա ընթացքի վրա՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն դիմել է ՀՀ Ֆինանսների նախարարություն պարզաբանման ստացման համար:

ՀՀ ՖՆ-ից ստացված պարզաբանման հետ կապված՝ կասեցված նիստի վերսկսումը հետաձգվել է, քանի որ առաջացել է ООО «НТЛ-ПРИБОР» ընկերությունից պարզաբանում ստանալու կարիք:

ՀՀ ՖՆ-ից ստացված պարզաբանմանումը կցվում է:

От АО «Русатом Сервис» было получено письмо, в котором участник представил вопросы для разъяснения. Поскольку поднятые вопросы нуждались в разъяснении норм, установленных действующим законодательством РА «О закупках», и могли повлиять на дальнейший ход процедуры закупки, ЗАО «ААЭК» обратилось в Министерство финансов РА для получения разъяснений.

В связи с полученными разъяснениями Министерства финансов РА возобновление приостановленного заседания было отложено, так как возник необходимость в получении разъяснения от компании ООО "НТЛ-ПРИБОР".

Разъяснение, полученное от Министерства финансов РА, прилагается.

Ընդունվեց որոշում՝ կողմ - 5, դեմ -0

Принято решение: за – 5, против – 0

6. Տվյալներ նվազագույն գնային առաջարկ ներկայացված մասնակցի հայտերի մասին
Данные о заявках участника, подавшего минимальное ценовое предложение

Տվյալներ հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին Данные о наличии документов в заявке, требуемых приглашением	Մասնակցի անվանումը Наименование участника	Գնահատվել է / оценка (նշել բավարար կամ անբավարար) (удовлетворительно / неудовлетворительно)
	ООО «НТЛ-ПРИБОР»	*բավարար / удовлетворительно*
Ընդունվեց որոշում՝ կողմ - 5, դեմ -0 **Принято решение: за – 5, против - 0**		
Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին **Данные о соответствии составления представленных участником документов условиям, установленным приглашением**	**Մասնակցի անվանումը** **Наименование участника**	**Գնահատվել է / оценка** (նշել բավարար կամ անբավարար) (удовлетворительно / неудовлетворительно)
	ООО «НТЛ-ПРИБОР»	*Մասնակցի կողմից ներկայացված մասնակցության հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները հրավերով սահմանված պայմաններին.* *- հավելված 1-ում որպես չափաբաժնի համար նշված է գնման առարկան,* *- Հավելված 1-ի 2-րդ կետի առաջին պարբերությունը չի համապատասխանում հրավերին, այն է բացակայում է «недобросовестной конкуренции» հատվածը:* *В заявке на участие, поданной участником, были зафиксированы следующие несоответствия условиям, определенным в приглашении* *- В приложении 1 в место номера лота указан предмет закупки,* *- 1-й абзац п. 2 Приложения 1 не соответствует приглашению, а именно отсутствует раздел «недобросовестной конкрукеренции».*
Ընդունվեց որոշում՝ կողմ - 5, դեմ -0 **Принято решение: за – 5, против - 0**		

7. Գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշում /
Решение, принятое оценочной комиссией

Առաջնորդվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման հավելված 1-ի (գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 41-րդ կետով՝ հանձնաժողովը որոշում կայացրեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ООО «НТЛ-ПРИБОР» ընկերությանը առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ ներկայացնել հրավերի պահանջներին համապատասխանող հավելված 1:

Руководствуясь п. 41 приложения 1 (порядок организации процесса закупок) Решения Правительства РА от 04.05.2017 г. № 526-Ն, оценочная комиссия приняла решение приостановить заседание и предложить ООО «НТЛ-ПРИБОР» в течение одного рабочего дня устранить зарегистрированные несоответствия – предоставить Приложение 1 которое соответствует приглашению.

Ընդունվեց որոշում՝ կողմ - 5, դեմ -0

Принято решение: за – 5, против – 0

7. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը (ՀՀ դրամ)/ Цена, предложенная каждым из участников (драмов РА)

Հ/Հ	Ձեռք բերվող ապրանքի անվանումը наименование товара		Գնումը կատարելու համար նախատեսված սահմանաչափ (ՀՀ դրամ) / запланированная установленная максимальная цена (драмов РА)	Մասնակիցների գնային առաջարկները							
				ООО «НТЛ-ПРИБОР»		АО «Русатом Сервис»		ООО «Исток 34»		«Երվադա» ՍՊԸ	
				առանց ԱԱՀ / без НДС	ներառյալ ԱԱՀ / вкл. НДС	առանց ԱԱՀ / без НДС	ներառյալ ԱԱՀ / вкл. НДС	առանց ԱԱՀ / без НДС	ներառյալ ԱԱՀ / вкл. НДС	առանց ԱԱՀ / без НДС	ներառյալ ԱԱՀ / вкл. НДС
1	ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի և փականների մատակարարում՝ ներառյալ հնի ապամոնտաժում, նորի տեղակայում և կարգաբերում	Поставка трубопроводов и арматур для I и II каналов системы охлаждения ответственных потребителей (СООП) аппаратного отделения энергоблока No2 Армянской АЭС, включая демонтаж старого, монтаж и наладка нового	**3,042,348,000.0**	2,766,785,426,04	ԱԱՀ վճարող չէ	2,852,356,482,54	3,037,189,182.6	2,795,308,996,97	ԱԱՀ վճարող չէ	3,600,000,000.0	4,320,000,000.0

8. Տեղեկություններ հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Նիստի անցկացման նպատակը	*Կասեցված նիստի վերսկսում / возобновление приостановленного заседания*
Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման վայրը	*<<ՀԱԷԿ>> ՓԲԸ, վարչական շենք*
Նիստի անցկացման օրը	*13.01.2023*
Նիստի անցկացման ժամը	
Ընդունվեց որոշում՝ կողմ - 5, դեմ -0 **Принято решение: за – 5, против - 0**	

Հանձնաժողովի նախագահ՝
Председатель комиссии **Ա. Արսենյան / А. Арсенян**

Հանձնաժողովի անդամներ՝
Члены комиссии **Հ. Բաղդասարյան / А. Багдасарян**

Ս. Սաֆարյան / С. Сафарян

Գ. Մարկոսյան / Г. Маркосян

Ա. Գրիգորյան / А. Григорян

Համակարգող-քարտուղար՝
Координирующий секретарь **Հ. Ռամազյան / Р. Рамазян**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆինսախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 156

№ 03/26-1/21956-2022

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԲԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԷԴՈՒԱՐԴ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ

Ի պատասխան 25.11.2022թ.
թիվ Ե/35/2642-22 գրության

Հարգելի պարոն Մարտիրոսյան

Ուսումնասիրելով հիշյալ գրությամբ բարձրացված հարցերը՝ հայտնում ենք հետևյալը.

1-ին հարցի վերաբերյալ.

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)՝

1) 21-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ Օրենսգրքի կիրառության իմաստով՝ կազմակերպություններ են համարվում՝ Օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված մշտական հաստատությունները՝ անկախ Օրենսգրքի 58-րդ գլխով սահմանված կարգով, որպես հարկ վճարող, հարկային մարմնում հաշվառված լինելու հանգամանքից,

2) 27-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտ կազմակերպության մշտական հաստատություն է համարվում Օրենսգրքի 58-րդ գլխով սահմանված կարգով, որպես հարկ վճարող, հարկային մարմնում հաշվառված՝ նույն մասում նշված՝ Հայաստանի Հանրապետությունում գործունեության վայրերից որևէ մեկը, որի միջոցով ոչ ռեզիդենտ կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն՝ անկախ գործունեության իրականացման ժամանակահատվածից, բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի,
- 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասում չնշված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման դեպքում մշտական հաստատություն է համարվում այն վայրը, որտեղ ոչ ռեզիդենտ կազմակերպության վարձած աշխատողների և (կամ) այլ անձնակազմի միջոցով կատարվում են աշխատանքներ և (կամ) մատուցվում են ծառայություններ, եթե այդ գործունեությունը Հայաստանի Հանրապետության տարածքում հարկային տարում շարունակվում է 183 և ավելի օրացուցային օր՝ սկսած ձեռնարկատիրական գործունեության իրականացումը սկսելու օրվանից՝ մեկ ծրագրի կամ մեկից ավելի կապակցված ծրագրերի շրջանակներում,

3) 39-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ աշխատանքի կատարման և (կամ) ծառայության, բացառությամբ էլեկտրոնային ծառայության, մատուցման վայրը համարվում է Հայաստանի Հանրապետությունը, եթե կազմակերպությունը, որի գտնվելու վայրը, Օրենսգրքի 4-րդ գլխի համաձայն, համարվում է Հայաստանի Հանրապետությունը, ընդունում է, մասնավորապես խորհրդատվական, իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական, ինժեներական, գովազդային, դիզայներական, մարկետինգային ծառայություններ, տեղեկատվության մշակման (այդ թվում՝ տեղեկատվության հավաքման ու ընդհանրացման) և փոխանցման (հաղորդման), գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և փորձարարական-տեխնոլոգիական (տեխնոլոգիական) աշխատանքներ, ինչպես նաև նույն ենթակետում նշված ծառայություններին համանման այլ ծառայություններ, ինչպես նաև անձնակազմի (աշխատակիցների) աշխատանքի տրամադրման ծառայություններ այն դեպքում, երբ անձնակազմն աշխատում է այդ ծառայությունները ստացողի գործունեության վայրում,

4) 59-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Օրենսգրքի 14-րդ բաժնով սահմանված կարգով հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարողներ հաշվառվում են կազմակերպությունները (բացառությամբ նույն մասի 2-րդ կետով սահմանված կազմակերպությունների), անհատ ձեռնարկատերերը և նոտարները,

5) 60-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ են համարվում աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը (բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի),

6) 70-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ ԱԱՀ վճարողները հաշվետու ժամանակաշրջանի համար պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված՝ Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարքների հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարների և Օրենսգրքի 71-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվանցվող (պակասեցվող) ԱԱՀ-ի գումարների (եթե Օրենսգրքի 72-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ) դրական տարբերությունը,
- 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացված՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման՝ ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների ու գործառնությունների գծով Օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը այդ ոչ ռեզիդենտ կազմակերպության փոխարեն՝ որպես հարկային գործակալ, կրում են պայմանագրային հարաբերությունների կողմ հանդիսացող ԱԱՀ վճարողները:

Նույն մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն մասով սահմանված դեպքերում ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքները համարվում են Հայաստանի Հանրապետությունում իրականացված, եթե աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման վայրը, Օրենսգրքի 39-րդ հոդվածի համաձայն, համարվում է Հայաստանի Հանրապետությունը,

7) 288-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ եթե ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացվող գործունեությունը բնութագրվում է մշտական հաստատության՝ Օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված հատկանիշներով,

ապա տվյալ ոչ ռեզիդենտ կազմակերպության մշտական հաստատությունը հաշվառվում է Օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում գործունեության վայրերից որևէ մեկի հասցեն սպասարկող հարկային մարմնում: Եթե ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացվող գործունեությունը դեռևս չի բնութագրվում մշտական հաստատության՝ Օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված հատկանիշներով, ապա տվյալ ոչ ռեզիդենտ կազմակերպության մշտական հաստատությունը կարող է հաշվառվել Օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում գործունեության վայրերից որևէ մեկի հասցեն սպասարկող հարկային մարմնում:

Միաժամանակ, «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 18-րդ հավելվածի 28-րդ կետի՝

- 1-ին պարբերության համաձայն՝ աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձումն իրականացվում է այն անդամ պետությունում, որի տարածքը ճանաչվում է աշխատանքների իրականացման, ծառայությունների մատուցման վայր (բացի նույն Արձանագրության 31-րդ կետում նշված աշխատանքներից),
- 2-րդ պարբերության համաձայն՝ հարկային բազան, անուղղակի հարկերի դրույքաչափերը, դրանց գանձման կարգը և հարկային արտոնությունները աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման դեպքում սահմանվում են այն անդամ պետության օրենսդրության համաձայն, որի տարածքը ճանաչվում է աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման վայր, եթե նույն բաժնով այլ բան սահմանված չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ՝

- Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտ կազմակերպության մշտական հաստատություն կձևավորվի, եթե բավարարվեն վերոնշյալ պայմանները,
- Հայաստանի Հանրապետության տարածքում մշտական հաստատություն ձևավորվելու պարագայում Օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով ԱԱՀ հաշվարկելու և վճարելու պարտավորությունը կկրի այդ մշտական հաստատությունը,

Հայաստանի Հանրապետության տարածքում մշտական հաստատություն չձևավորվելու պարագայում ԱԱՀ հաշվարկելու և վճարելու պարտավորությունը կկրի պայմանագրային հարաբերությունների կողմ հանդիսացող՝ ԱԱՀ վճարող համարվող տնտեսավարող սուբյեկտը:

Ընդ որում պետք է նկատի ունենալ, որ եթե տվյալ գործարքի գծով ԱԱՀ վճարող է հանդիսանալու պատվիրատուն, ապա գնային առաջարկները գնահատելու և ընտրված մասնակցին հավասար պայմաններով որոշելու համար պատվիրատուն տվյալ մասնակցի գնային առաջարկին պետք է ավելացնի իր կողմից կատարվելիք ծախսերը (ԱԱՀ և հրավերով նախատեսված այլ՝ օրինակ տեղափոխման հետ կապված ծախսեր):

2-րդ և 4-րդ հարցերի վերաբերյալ.

«Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի

ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց նշված հարկի գումարի հաշվարկման: Իսկ նույն կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան...:

Հարկ է նկատել, որ քննարկվող ընթացակարգի հրավերով ապրանքների մատակարարման վայր է նշված ք.Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն:

3-րդ հարցի վերաբերյալ.

գնման բոլոր՝ այդ թվում նաև էլեկտրոնային աճուրդով իրականացվող ընթացակարգերի դեպքում մասնակիցները կարող են ներկայացնել նախահաշվային գինը գերազանցող գնային առաջարկներ: Իսկ հակադարձ աճուրդի իրականացման արդյունքում համակարգի կողմից ավտոմատ կերպով մերժվում են այն առաջարկները, որոնք գերազանցում են գնման գինը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

12/15/2022

X

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN AVAG 2003930574

Կատարող՝ Ա. Աղաջանյան
Հեռ. (011) 800 258